Հաստատում եմ

ԵԳՊԱ ռեկտոր

Ա. Է. Իսաբեկյան

«02» 06 2014թ.

ԵԳՊԱ

Բակալավրական ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույց

Բակալավրական (Բակ)
և Մագիստրոսական (Մագ) ծրագրերի
շրջանավարտների համար

ԵՐԵՎԱՆ 2014

Նախաբան

Սույն փաստաթուղթը Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի (ԵԳՊԱ) բակալավրական և մագիստրոսական աստիճաններում ավարտական աշխատանքի և թեզի պատրաստման և ներկայացման ընդհանուր ուղեցույց է: Այն իրազեկում է համաձայն Հայաստանի ազգային որակավորումների շրջանակի՝ որակավորումների արդյունքը վկայող ավարտական փաստաթղթերի պատրաստման, ներկայացման և պաշտպանության հետ առնչվող քաղաքականության և գործընթացների մասին:

Սույն փաստաթուղթը սահմանում է ԵԳՊԱ - ՈՒՍԱՆՈՂ փոխհարաբերությունն ու փոխըմբռնումը և նպատակ ունի կանխել հնարավոր խնդիրների ծագումը:

Ուղեցույցը ծանուցում է ավարտական աշխատանքի պատրաստման, ներկայացման և պաշտպանության ընթացքում ուսանողի իրավունքների և պարտականությունների մասին, ինչպես նաև հստակեցնում է ԵԳՊԱ-ի և մասնավորապես՝ ավարտական աշխատանքի ղեկավարների պարտականությունները:

Բովանդակություն

Բովանդակություն 3

Ներածություն 4

Ընդհանուր ուղեցույց բակալավրական և մագիստրոսական շրջանավարտների համար 5

Բակալավրական և մագիստրոսական ավարտագրերի ձևաչափ 6

Բակալավրական և մագիստրոսական ավարտագրերի բաժինները 7

Փաստաթղթերի փաթեթ 10

Ներածություն

Ընդհանուր առմամբ, թեզը՝ ավարտական աշխատանքը, արտացոլում է ուսումնառության ողջ ժամանակաշրջանի և մասնավորապես ավարտական աշխատանքի պատրաստման ընթացքում ուսանողի ձեռք բերած գիտելիքները: Ավարտական աշխատանքում ուսանողները պետք է ներկայացնեն հետազոտության առարկա եղած հիմնական խնդրի/խնդիրների շուրջ արված իրենց եզրակացությունները, պարզաբանեն հետազոտության ընթացքում կիրառված արվեստաբանական և տեսական մեթոդներն ու նշեն, թե այս փորձառությունը ինչ ազդեցություն կունենա իրենց հետագա ծրագրերի վրա:

ԵԳՊԱ-ի կողմից առաջարկվող ուսումնական ծրագրերում *Բակալավրի* (ԲԱԿ) և *Մագիստրոսի* (ՄԱԳ) աստիճանները շնորհվում են ավարտական աշխատանքի պաշտպանությունից հետո: Վերջինն արտացոլում է ուսանողների որակավորումների արդյունքը՝ ՀՀ որակավորումների ազգային շրջանակին համապատասխան, և պետք է ցուցադրի ուսանողի դրսևորած ստեղծագործական միտքը, ինքնատիպությունը և մասնագիտական մակարդակով արվեստին տիրապետելու ունակությունը:

Ընդհանուր ուղեցույց
բակալավրական և մագիստրոսական շրջանավարտների համար

ԲԱԿ և ՄԱԳ ավարտական աշխատանքը արվեստի բակալավրի և մագիստրոսի աստիճան ստանալու համար ներկայացվող վերջին պահանջն է: Բակալավրիատի ուսանողները վեցերորդ կիսամյակի ավարտին, իսկ մագիստրատուրայի ուսանողները՝ առաջին կիսամյակի ավարտին, ամբիոն են ներկայացնում ընտրված թեմայի նախնական ուրվագիծը, որից հետո ընտրվում են ավարտական աշխատանքների/թեզերի գիտական ղեկավարներ, որոնք պետք է լինեն ԵԳՊԱ դասախոսական կազմից: Յուրաքանչյուր ուսանողին կցվում է մեկ ղեկավար: Ղեկավարները պարբերաբար հանդիպում են ուսանողների հետ՝ թեման համատեղ քննարկելու և մշակելու, ինչպես նաև արվեստանոցային աշխատանքի ընթացքին հետևելու համար: Ղեկավարները խորհուրդներ են տալիս և օգնում են ուսանողներին՝ ավարտական աշխատանքի/թեզի պատրաստման հետ կապված բոլոր տիպի խնդիրներում:

ԲԱԿ ուսանողները ուսումնառության ավարտական տարում, իսկ ՄԱԳ ուսանողները՝ երկրորդ կիսամյակի սկզբից, սկսում են աշխատել ավարտական աշխատանքի նախագծի վրա:

ԲԱԿ և ՄԱԳ ավարտական աշխատանքի նախագծերը կազմված են երկու գլխավոր մասից *(Կերպարվեստի պատմություն և տեսություն մասնագիտության ավարտական աշխատանքը՝ մեկ գրավոր մասից)*. և պետք է մշակվեն դասախոսի անմիջական ղեկավարությամբ:

Դրանք են՝

- Ավարտական աշխատանքի/թեզի պորտֆոլիո, որտեղ բացի վերջնական բուն աշխատանքից ներառված կլինեն նաև ուսանողի՝ ուսումնառության ընթացքում կատարած առնվազն 5 լավագույն աշխատանքները, ավարտական աշխատանքի նախագիծը և էսքիզները:
- Ավարտական աշխատանքը/թեզը ներկայացնող **տեսական-հետազոտական գրավոր շարադրանք՝ ավարտագիր**, որտեղ քննության են առնվում աշխատանքի ելակետային թեմաները, վերլուծվում են կատարման առանձնահատկությունները և մեկնաբանվում դրանց առնչվող անհատական, պատմական և գաղափարական խնդիրները:
- *Կերպարվեստի պատմություն և տեսություն մասնագիտության* **ավարտագիրը** ներկայացնում է ընտրված թեմայի կամ գիտական

խնդրի շուրջ ընդհանրական, հետազոտական և վերլուծական բուն աշխատանքը:

Բակալավրական և մագիստրոսական ավարտագրերի ձևաչափ

Բակալավրական և մագիստրոսական ավարտագրերը պետք է ներկայացվեն քննարկման և տպագրման՝ ըստ հետևյալ պաշտոնական ձևաչափի և կարգի.

Ավարտագիրը պետք է պատրաստված լինի A4 չափի թղթի վրա, ինչպես նաև սրբագրված լինի վրիպակային, ուղղագրական և կետադրական սխալներից: Բակալավրի ավարտագրի ծավալը, ներառյալ Մատենագիտական ցանկը, պետք է լինի 10-15 էջ (Կերպարվեստի պատմություն և տեսություն մասնագիտության համար՝ 40-45), իսկ մագիստրոսինը՝ 20-25 էջ (Կերպարվեստի պատմություն և տեսություն մասնագիտության համար 55-60): Պատկերային նյութը, աղյուսակները, գծագրերը չեն ընդգրկվում այս ծավալի մեջ: Այս ցուցումներն իհարկե ընդհանուր չափանիշներ են. յուրաքանչյուր աշխատանք պետք է արժանանա նախ ղեկավարի հավանությանը, ապա ամբիոնի դրական կարծիքին:

Անհրաժեշտ է ներկայացնել ԲԱԿ/ՄԱԳ թեզի ավարտագրի երկու օրինակ: Դրանցից մեկը կվերադարձվի ուսանողին գրախոսվելուց հետո, իսկ մյուսը կմնա համապատասխան ամբիոնի դարանում: Երկու օրինակներն էլ պետք նույնական լինեն և համապատասխանեն ձևաչափային բոլոր պահանջներին.

- ԲԱԿ/ՄԱԳ ավարտագրի տեքստը պետք է մուտքագրվի ստանդարտ A4 չափի սպիտակ թղթի վրա և տպագրվի տպիչով (printer):
- Ամբողջ շարադրանքի տառատեսակը պետք է լինի միանման՝ ցանկացած յունիկոդ տառատեսակով, տառաչափը՝ 12 կետաչափ:
- Տողամիջի տարածությունը պետք է լինի 1,5 չափի:
- Լուսանցքները բոլոր կողմերից պետք է լինեն 2 սմ:
- Էջերը պետք է համարակալված լինեն էջի ստորին աջ անկյունում և չպետք է ներառեն ուսանողի անունը կամ աշխատանքի վերնագիրը:

Ուսանողները պետք է սկսեն աշխատել *ավարտագրի շարադրանքի* վրա թեմաները հաստատվելուց անմիջապես հետո՝ պարբերաբար գիտական ղեկավարի հետ հանգամանորեն քննարկելով և՛ շարադրվելիք նյութը և աշխատանք(ներ)ը:

Պետք է հաշվի առնել, որ ընդհանրապես ավարտագիրը կարող է մեկ կամ երկու վերընթերցման և մի շարք փոփոխությունների կարիք ունենալ, ըստ այդմ էլ՝ հաճախ մի քանի անգամ փոխանցվել ուսանողի և ղեկավարի միջև: Այս գործընթացը պետք է ավարտին հասցվի մինչև սահմանված վերջնաժամկետը, ուստի ավարտագրի նախնական տարբերակը պետք է

ղեկավարին հանձնվի պաշտպանության ժամկետից առնվազն չորս շաբաթ առաջ: Եթե ղեկավարը գտնում է, որ ուսանողը պատրաստ չէ լավագույնս հանդես գալու՝ կարող է վերջինիս խորհուրդ տալ հետաձգել պաշտպանությունը մինչև հաջորդ տարի: Ցանկացած հետաձգման համար անհրաժեշտ է ամբիոնի կարծիքը, ապա՝ արվեստի ԱԳՄ հանձնաժողովի համաձայնությունը:

ԲԱԿ և ՄԱԳ ավարտագրերի բաժինները

Ավարտագիրը պետք է բաղկացած լինի հետևյալ բաժիններից.

- *Տիտղոսաթերթ* – (տե՛ս Հավելված 1) որտեղ MS Word ծրագրով պետք է գրված լինեն ավարտական աշխատանքի/թեզի վերնագիրը, ուսանողի անունը և ազգանունը, ավարտելու տարին, գիտական ղեկավարի և գրախոսի անունները՝ համապատասխան ստորագրություններով.

- *Երախտիքի խոսքը կամ Երախտագիրը* համարվում է գլխավոր վերնագիր և պետք է տպված լինի ըստ ձևաչափի՝ ինչպես ավարտագրի մյուս գլխավոր վերնագրերը:

- *Բովանդակություն* բաժինը պետք է մուտքագրվի՝ օգտագործելով "Document Elements" ֆունկցիան Word ծրագրով:

- *Աղյուսակների, նկարների, գծագրերի ցանկ*

- *Համառոտագիր* երկու-երեք պարբերությամբ պետք է ներկայացնի ավարտագրի նախագիծը և բանալի բառերը՝ համացանցում որոնում կատարելու համար:

- *Ներածություն*՝ 3-5 էջի սահմաններում, որտեղ ուսանողը համառոտում է իր ավարտական աշխատանքը հետևյալ սկզբունքով.
  ա) հիմնավորում է ավարտական աշխատանքի/թեզի թեմայի ընտրությունը,
  բ) մեկնաբանում է իր աշխատանքի կրած արվեստային ազդեցությունները՝ նշելով այն հեղինակներին և ստեղծագործությունները, որոնք հատկապես էական ուղղորդող դեր են խաղացել ուսանողի աշխատանքի թեմատիկ բովանդակության, ոճի և արտահայտչամիջոցների վրա,
  գ) նշում է, թե ըստ իրեն ավարտագրում և ամբողջ ստեղծագործական աշխատանքում որն է իր անհատական գեղարվեստական ոճը՝ փորձելով այն դիտարկել պատմական համատեքստում,

դ) ներկայացնում է այն կարևորագույն բնագավառները, որոնք նպաստել են իր՝ որպես արվեստագետի աճին կերպարվեստի բակալավրի/ մագիստրոսի ծրագրով ուսանելու ընթացքում:

- *Կերպարվեստի պատմություն և տեսություն մասնագիտության ուսանողների ավարտագրի **Ներածությունը** (5-8 էջ) ընդգրկում է ընտրված թեմայի ընդհանուր ներկայացումը, հիմնավորումը, «հարցի պատմությունը» և կատարվելիք հետազոտական աշխատանքը՝ ըստ թեմատիկ բաժանումների:*

- Հետազոտական վերլուծությունը
  - Լուսաբանում է ավարտական աշխատանքի նախագծի շուրջ կատարված հետազոտությունը, թե ինչպես է հետազոտությունը ազդել թեմայի հանդեպ ուսանողի մոտեցման վրա:
  - Հանգամանորեն դիտարկում է աշխատանքը արվեստի տվյալ ճյուղի մասնագիտական համատեքստում:
  - Բացահայտում է նախագծի մտահաղացման կապը այդ թեմայով արդեն իսկ գոյություն ունեցող ստեղծագործական աշխատանքների և գրականության հետ, ինչպես նաև ցույց է տալիս, թե ինչով է նպաստում ավարտական աշխատանքը արվեստի տվյալ ճյուղի ձեռքբերումներին:

- *Կերպարվեստի պատմություն և տեսություն մասնագիտության ավարտագրի **բուն հետազոտական աշխատանքը** բաղկացած է երկու և ավել մասերից կամ մի քանի գլուխներից (անհրաժեշտության դեպքում՝ ենթագլուխներից և ենթավերնագրերից), որոնցից յուրաքանչյուրը պարունակում է թեմային վերաբերող առանձին հարցի, նյութի կամ խնդրի ներկայացում, հետազոտություն և վերլուծություն:*

- Ավարտական աշխատանքի պատրաստման գործընթաց բաժինը.
  - Վերաբերում է բուն ստեղծագործական աշխատանքի պատրաստման գործընթացին: Ուսանողները պետք է ներկայացնեն, թե ինչ էին նախատեսել անել և ինչն են կարողացել իրականացնել, թե ինչպիսի հաշվարկված և անկանխատեսելի խոչընդոտների են հանդիպել և ինչպես են կարողացել դրանք հաղթահարել, վերջապես՝ թե ինչ ուսանելի սխալներ են թույլ տվել աշխատանքի ծավալման ընթացքում:
  - Ներկայացվում է, թե ուսանողները ինչ են հասկացել և ինչպիսի եզրահանգումների են եկել կոնկրետ ավարտական աշխատանքի, ընդհանրապես իրենց՝ որպես արվեստագետի հուզականության վերաբերյալ և թե ինչպիսի մոտեցումներ են ցուցաբերելու հետագա նախագծերի հանդեպ:

- Ավարտական աշխատանքի հրապարակայնացում բաժինը
    - Սահմանում է հասարակական շրջանակը, որին հասցեագրված է ուսանողի ավարտական նախագիծը. արդյոք նրանք մտադիր են այդ նախագիծը հասարակական ուշարության և հանրային քննարկումների առարկա դարձնել, եթե այո՝ ինչպես են հասնելու այս նպատակին, և որն է ավարտական նախագիծը հրապարակայնացնելու իրենց պլանը:
    - Շոշափում է բոլոր իրավական հարցերը, որ վերաբերում են ծրագրի շրջանակներից դուրս իրենց ավարտական աշխատանքի նախագիծը հրապարակայնացնելու հնարավորություններին: Եթե նախագիծը ներառում է հեղինակային իրավունքով պաշտպանված չլիցենզավորված նյութ, ապա ուսանողները պետք է հանգամանորեն պարզաբանեն և հիմնավորեն, որ միանգամայն անշահադիտական նպատակով են օգտագործել այդ կողմնակի տարրերը իրենց նախագծում:

    - *Կերպարվեստի պատմություն և տեսություն մասնագիտության ավարտագիրն ավարտվում է **Եզրակացությամբ**, որտեղ ուսանողը հակիրճ ամփոփում է կատարած աշխատանքը և ներկայացնում հետազոտության արդյունքում պարզված եզրակացությունները:*

- ***Մատենագիտական ցանկ*** բաժինը
    - Ընդգրկում է առնվազն 10 (ԲԱԿ) և 20 (ՄԱԳ) անուն գիրք, հոդված, էլ-կայք, ֆիլմ, տեսանյութ և այլ հետազոտական աղբյուրներ: Մատենագիտության նշված աղբյուրների մեծ մասը պետք է հղված կամ մեջբերված լինեն ավարտագրի բուն շարադրանքում և բովանդակային առումով համապատասխանեն դրան: Մատենագիտական ցանկը կազմվում է հայատառ/ռուսատառ/լատինատառ (կամ՝ լատինատառ/ռուսատառ՝ ըստ թվարկված ծավալի) հաջորդականությամբ: Ինտերնետային հղումները պետք է, բացի կայքի հասցեից, ունենան բովանդակային տվյալներ (հեղինակ, վերնագիր, սյուժեի անվանում) և ընդգրկեն կայքին հղելու ճշգրիտ ամսաթիվը:

    - *Կերպարվեստի պատմություն և տեսություն մասնագիտության մատենագիտական ցանկը կարող է, ըստ պահանջի, կազմված լինել «սկզբնաղբյուրներ» և «գիտական գրականություն» մասերից:*

- *Հավելված*
    - Ներկայացվում են ավարտական աշխատանքին վերաբերող ցանկացած լրացուցիչ փաստաթուղթ, տեղեկանք, պորտֆոլիոյի հավաստագիր, հարցաթերթիկներ, այլ հավելյալ նյութեր, որոնք նախագծի համար կարևոր են, բայց վճռորոշ չեն:
    - Հավելվածները պետք է նշվեն *Բովանդակության* մեջ՝ համարակալումով (Հավելված 1, 2…) կամ տառով (Հավելված Ա, Բ…) և վերնագրով, որն ընդհանուր առմամբ նկարագրում է յուրաքանչյուր հավելվածի բովանդակությունը:
    - Ինչպես բոլոր վերնագրերը, այնպես էլ հավելվածի վերնագրերը պետք է ունենան միևնույն տառատեսակը, ձևաչափը և ոճը:
    - Նույնիսկ եթե հավելվածի նյութն իր բնօրինակ տեսքով է ներկայացվում ավարտագրում այն պետք է համապատասխանի ուղեցույցում պահանջված լուսանցքային ձևաչափին:
    - Եթե առկա է մեկ հավելված, ապա պետք է նշել միայն վերջինիս վերնագիրը՝ առանց համարի կամ տառի:

Ավարտական աշխատանքի հաստատում

Ղեկավարը և գրախոսը իրենց հաստատումը պետք է վավերացնեն՝ ավարտագրի տիտղոսաթերթի վրա ստորագրելով: Այնուհետև ավարտական աշխատանքը/թեզը հաստատման է ներկայացվում համապատասխան ամբիոն: Եթե ամբիոնը գտնում է, որ այն համապատասխանում է ավարտագրին ներկայացվող պահանջներին, ապա ամբիոնի վարիչը ստորագրում է ուսանողի կողմից լրացված հաստատման ձևաթուղթը:

Փաստաթղթերի փաթեթ

Ղեկավարների կողմից հաստատված ավարտական աշխատանքները պետք է ներկայացվեն համապատասխան ամբիոն մինչև ամբիոնի կողմից սահմանված վերջնաժամկետը:

Ծանուցում. Եթե փաստաթղթերը և հաստատված ավարտական աշխատանքը մինչև համապատասխան կիսամյակի ավարտին նշանակված վերջնաժամկետը չեն ներկայացվում ամբիոն, ուսանողը դրանք կարող է ներկայացնել հաջորդ ուսումնական տարում և պետք է մուծի բարձրագույն ուսումնական հաստատությունում հաշվառված մնալու վճարը (մոտավորապես 3 կրեդիտի վճար) այդ կիսամյակի համար:

Փաստաթղթերի փաթեթը բաղկացած է՝

- 10-15 էջ (ԲԱԿ) և 20-25 էջ (ՄԱԳ) ծավալով ավարտագիր՝ երկու օրինակով (Կերպարվեստի պատմություն և տեսություն մասնագիտության համար՝ համապատասխանաբար 40-45 և 55-60 էջ);
- Ավարտական աշխատանքի/թեզի նախագծի լուսանկար(ներ)ը;
- Ավարտագրի և ավարտական աշխատանքի/թեզի նախագծի լուսանկարների թվային տարբերակ
- Ցուցադրության համար արված ցանկացած տեսանյութի DVD տարբերակ (երկու օրինակ):

Հավելված 1: Տիտղոսաթերթի նմուշ

Երեւանի Գեղարվեստի Պետական Ակադեմիա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ/ԹԵԶԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ
ԳԼԽԱՏԱՌԵՐՈՎ: ԱՌԱՆՁԻՆ ՏՈՂՈՎ ԵՒ
ՄԱՔՍԻՄՈՒՄ 14 ՏԱՌԱՉԱՓՈՎ

Ավարտական աշխատանք/Մագիստրոսական թեզ

Ներկայացված է որպես Երեւանի Գեղարվեստի
Պետական Ակադեմիայի Կերպարվեստի
Բակալավրի/Մագիստրոսի աստիճանի պահանջների
կատարման մի մաս

Կերպարվեստի/Դիզայնի եւ Կիրառական Արվեստի Ֆակուլտետ

Շրջանավարտ՝ .....

Ղեկավար՝ .....

Ընդդիմախոս՝ .....

Երեւան 20....